

Սերգեյ Ա. Աղաջանյան
Բանաս. գիտ. դոկտոր

ՄԵԶ ԱՆԾԱՆՈՒ ՔԱԶ ՆԱԶԱՐԸ

Ըստ Հովհ. Թումանյանի համանուն հեքիաթի*

Մուտք

Թերևս ավելորդ զբաղմունք կլինի վերահաստատել այն հայտնի իրողությունը, որ Հովհ. Թումանյանի «Քաջ Նազարը» հեքիաթն¹ ունի համաժողովրդական ճանաչում և մշտապես արժանացել է մասնագիտական ուշադրության: Առաջինի վկայություններից մեկն էլ այն է, որ նրա հերոսի անունը մեզանում արդեն դարձել է որոշակի նկարագրի ու ճակատագրի մարդկանց բնութագիր, իսկ Մեծ Լոռեցու կենսափիլիսոփայության և ստեղծագործության ժողովրդական ակունքների մասին որևէ լուրջ ուսումնասիրություն չի շրջանցել այդ հանրահայտ հեքիաթը:

Իր փոքր ծավալի մեջ հաջողված գեղարվեստական գլուխգործոց, որի թվացյալ մատչելիության ետևում չի էլ նկատվում հեղինակի լրջագույն վերաբերմունքը հեքիաթի ժանրին, ստեղծագործական-նախապատրաստական աշխատանքի ծավալը և այլն: Այս ամենի մասին նույնպես բազմիցս գրվել է, բայց Հովհ. Թումանյանը հենց նրանով է Թումանյան, որ իր գեղարվեստական աշխարհին անդրադարձի խորհրդավոր հաճուքի անընդմեջ առիթներ է տալիս: Յուրաքանչյուր այդպիսի առիթ հղի է, թվում է թե մինչև վերջ ճանաչված նրա ստեղծագործության մեջ անգամ նորի փնտրտուքի, վերագնահատման, վերաիմաստավորման կարիք ունեցող հայտնաբերումներով:

Ստեղծագործությունը՝ լավ հայտնի, հերոսի մարդկային տեսակը, կենսագրությունը, ինչպես դասագրքային ճշմարտություն, թվում է՝ միանշանակ ու մեկընդմիշտ յուրացված: Մանավանդ որ հանձարեղ գրողի ոճն էլ իր անպաճուճանք ու սեղմ շարադրանքով ասես գալիս է ամրապնդելու

Ե (ՃԵ) քարի, թիվ 3 (43) հայիս-մեպրեսներ, 2013
ՎԻՄ համահայկական հանդես

*Հոդվածն ընդունվել է տպագրության 23.08.2013:

1 Հեքիաթի մեզ հայտնի տարբերակը Հովհ. Թումանյանը շարադրել է 1912 թ.: Դրանից առաջ՝ 1908 թ. գրված տարբերակն անհայտացել է տարեվերջին՝ հեղինակի ձեռքակալության ժամանակ տարված թղթերի հետ: Տե՛ս Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Եր., 1994, էջ 784:

այդ համոզմունքը:

Ուսումնասիրության վերնագրից չպիտի ենթադրել, թե մեր ասելիքը վերաբերելու է հեքիաթի միայն գլխավոր հերոսին: Թեև նրա անունը մեր ընկալումների մեջ ամրակայվել է իբրև հաջողակ և բախտավոր մարդկանց կյանքը բնութագրող խորհրդանիշներից մեկը, սակայն ակնհայտ է, որ այդ խորաթափանց ստեղծագործության բուն ասելիքի մեջ էականը նույնիսկ քաջագարության ֆենոմենը չէ: Նա միաժամանակ նաև միջոց է, լակմուսի թուղթ, որով Հովհ. Թումանյանը քննում է մարդկային գոյի և համակեցության լրջագույն հիմնախնդիրները: Դրա համար էլ այս հեքիաթի մասին գրելը ենթադրում է հավասարաչափ անդրադարձ և՛ հերոսին, և՛ նրա կենսական միջավայրին, և՛ այդ երկուսի փոխհարաբերության առանձնահատկություններին:

Որ Հովհ. Թումանյանն ամենայն լրջությամբ է վերաբերվել ժողովրդական բանահյուսությանը, մանավանդ հեքիաթին և ինքն էլ անմրցելի հեքիաթագիր է, դրսևորվել է թե՛ գործնականում (իր հեքիաթներում), թե՛ ժանրի բանասիրական իր բնորոշման մեջ²: Ինքն էլ, իրեն բնորոշ համեստությամբ ու զսպվածությամբ հանդերձ, լավագույնս գիտակցել և ընդգծել է ժանրում սեփական վաստակի կշիռը նույնիսկ համաշխարհային գրականության չափումներով³:

«Քաջ Նազարը» Հովհ. Թումանյանի հեղինակային⁴ իրապատում հեքիաթներից է՝ արդյունք նաև բանասիրական լրջագույն աշխատանքի⁵: Լինելով տարբեր ազգերին պատկանող բազմաթիվ (ուսումնասիրողները նշում են մոտ երեսուն) համանման մոտիվներով ժողովրդական հեքիաթների ստեղծագործական վերամշակման արդյունք՝ «Քաջ Նազարն» ըստ էության նաև սկզբնաղբյուր է: Ոգեշնչվելով հեքիաթի հավերժական պրոբլեմատիկայով՝ մի շարք հայ գրողներ մեր գրականության մեջ ձևավորեցին «քաջագարական»⁶ թեմատիկան⁷: Սա ևս հեքիաթի կատարելության օգտին խոսող փաստերից մեկն է:

1. Քաջ Նազարի ողիսականը. դրվագ առաջին

«Քաջ Նազարը» հեքիաթը բաղկացած է վեց ոչ ծավալուն դրվագներից: Դրանցում է ամփոփված հերոսի ողջ կենսապատումն իր բնակավայրում ընթերցողի հետ առաջին հանդիպումից մինչև ապրած կյանքի փիլիսոփայական իմաստավորումը, որի անկեղծությունը եզակի է թագավորական վտանգավոր բարձունքներին հասածի համար:

2 Տե՛ս **Թումանյան Ն.**, Հուշեր և գրույցներ, Եր., 1987, էջ 225:

3 Տե՛ս **Թումանյան Հովհ.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, Եր., 1999, էջ 422-424:

4 Անովագն գարնանայի է, որ ժամանակին Հովհ. Թումանյանը ստիպված է եղել հեղինակային իր իրավունքն ապացուցել ու պաշտպանել հուսահատեցնելու աստիճան չարական մարդկանցից: Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Ոչ գիտական ոչնչությունները քննադատ, «Երկերի լիակատար ժողովածու», հ. 6, Եր., 1994, տե՛ս նաև՝ «Հովիտի» Ս. Հ-ի քննադատականի առիթով, Հայոց դրամբյանիզմն ու եր, «Երկերի լիակատար ժողովածու», հ. 7, Եր., 1995:

5 Տե՛ս **Վարդանյան Ա.**, Հովհաննես Թումանյանի հեքիաթները, Եր., 1986, էջ 135-148:

6 Տե՛ս **Ջրբաշյան Էդ.**, Թումանյանի գեղարվեստական արձակը: Տե՛ս **Թումանյան Հովհ.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Եր., 1994, էջ 741:

7 Գտնվելին նոր Ս. Հ-եր ու Դրամբյաններ և այդ հայ գրողներին էլ մեղադրելին ուրիշի մտավոր սեփականությունը յուրացնելու, գրագողության մեջ:

Եվ այսպես՝ դրվագ առաջին. Նազարն իր տանն ու բնակավայրում: Այս հատվածը մյուսներից տարբեր է մի էական առումով: Դա երկխոսությունների ու մենախոսությունների առատությունն է: Հաջորդ դրվագներում Հովհ. Թումանյանի հերոսները, մանավանդ՝ Նազարն այդքան չեն խոսում. գերակշռողը հեղինակի պատմողական-նկարագրական խոսքն է: Նշված ոճական առանձնահատկության նպատակն ակնհայտ է՝ գլխավոր հերոսի էությունն ընթերցողի առաջ լիարժեք բացահայտել իր իսկ խոսքով: Իսկ նրա մարդկային էության լավ իմացությունը շատ է անհրաժեշտ պատումի հետագա ընթացքի բովանդակությունն ըմբռնելու համար:

Հովհ. Թումանյանն ընթերցողին կարծես թե ի սկզբանե ազատում է հերոսին ճանաչելու հոգսից: Նազարին բացահայտող նրա բնութագրերն անխղճորեն մերկացնող են՝ «խելճ», «անշնորհք ու ալարկոտ», «Վախկոտ Նազար», «օրը մինչև իրիկուն կնկա կողքը կտրած՝ նրա հետ դուրս գնալիս դուրս էր գնում, տուն գալիս՝ տուն գալի՞» (235): Ալարկոտ, անշնորհք, բայց ավելի շատ՝ վախկոտ, որովհետև նրան լավ ճանաչող համագյուղացիների համար նա առաջին հերթին Վախկոտ Նազարն է: Իր բնակավայրում հերոսի վարկը ձևավորվել է տարիների ընթացքում, որը բացառում է թյուրիմացությունը, պատրանքային գնահատականը, անիրատեսությունը: Հատկանշական է, որ այս Նազարն իր խղճուկ կենսատարածքում իր տանն ու դռանը, անգուսպ պարծենկոտ է, մեծաբերան: «Հնդստանից եկող Շահի քարվանք» (235) կտրել-բերել-տունը լցնելու հոխորտանքը կնոջ մոտ ինքնահաստատվելու, քաջ տղամարդ երևալու նրա անխոհեմ քայլն է, որի պատճառով խստորեն պատժվում է՝ ուղղակի դուրս շարտվելով տնից:

Շեքիաթը չկարդացած, լսելով իմացող մարդիկ էլ այս ամենը լավ գիտեն. պատահական չէ՝ Քաջ Նազար խորհրդանիշ-անվան համազգային ճանաչումը: Հեքիաթին բոլոր անդրադարձածներն էլ չեն անտեսել այս դրվագի սկիզբը, որովհետև հերոսի ելման կետի նկարագիրն այստեղ լիովի բացահայտված է: Դա հիմք է դարձել, որպեսզի մասնագիտական գնահատականներում էլ ընդգծվի «ամենից անարժան» մարդուն կյանքի մատուցած բարիքների անհամարժեքությունը: Միայն մի օրինակ. «Ինքը՝ Նազարը բավական պասիվ է դեպքերի մեջ, նա ոչ մի հատուկ ջանք չի գործադրում բարձրանալու, հռչակվելու համար, չի էլ ձգտում թաքցնել իր իսկական էությունը: Նա միայն հաճույքով օգտվում է կատարվածի արդյունքներից: Եվ, այնուամենայնիվ, հանգամանքներն առնում են նրան իրենց ուսերին ու բարձրացնում են հասարակական աստիճաններով: Ստացվում է այնպես, որ ամենից անարժան մարդը, ինքնաբերաբար, ակամայից, պատրաստի ստանում է բոլոր իրավունքներն ու բարիքները»⁹:

Եվ այսպես, Նազարը մինչև լուսաբաց մնում է դռանը: Դեռ ոչինչ չէր արել, միայն խոսել էր, որի դիմաց խստորեն պատժվել էր: Դրա մասին նա երբևէ չի խոսում, դրան նույնիսկ մտովի չի անդրադառնում: Բայց նրա հետագա վարքագիծը ցույց է տալիս, որ այդ դասը երբեք չի մոռանում: Ասես հասկանում է, որ իր լեզուն իր թշնամին է: Հաջորդ օրն առաջինը,

8 Շարադրանքի տեքստում «Քաջ Նազարը» հեքիաթից այս և հաջորդ բոլոր մեջբերումներն արված են Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Եր., 1994 զրբից: Մեջբերումներին հաջորդող փակագծի թվանշանը ցույց է տալիս էջահամարը:

9 Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, Ե., 1979, էջ 333:

ինչ անում է, շատ բնորոշ է իր տեսակին. «աղաչում-պաղատում է» (236), որ կհնր ներս թողնի: Բայց իզուր:

Ահա այդ պահից նրա կյանքում սկսվում է մի նոր բան: Եվ դա այն չէ, ինչը բազմիցս կրկնվել է հեքիաթի մեկնաբանություններում. իբրև թե հիմար, տգետ մարդկանցից կազմված հասարակությունը տնից վտարված վախկոտ, անարժան մեկին տանում-հասցնում է փառք ու վայելքի առավելագույնին:

Հեքիաթի վերլուծություններում Նազարի և շրջապատի նկատմամբ կրքոտ մերժումի ակնհայտ տրամադրվածությունը հաճախ հանգեցնում է հուզական գնահատականների, որը խանգարում է քաջնազարության ֆեյնոմենի անհատական-մարդկային և սոցիոմշակութային առանձնահատկությունների լիարժեք դիտարկմանը:

«Նազար և հանրություն» փոխհարաբերությանն անդրադարձից առաջ հարկ է նկատել շրջապատող աշխարհի նկատմամբ նրա վերաբերմունքում տեղի ունեցած էական փոփոխությունը: Դա կարելի է համառոտ բնութագրել իբրև պարադոքսալ վարքագծի դրսևորում, որի էությունը հետևյալն է. **մարդն անում է մի բան, որը տվյալ իրավիճակում իր տեսակի համար ենթադրվող վարքագծի հակառակն է:** Ինքնին չափազանց հետաքրքիր իրողություն լինելուց զատ՝ այն ի հայտ է բերում սովորական դարձած օրինաչափությունը ժխտող այլ օրինաչափություն: Օրինակ, ասենք, ինչ կլինի, եթե արջին դեմ դիմաց ելած մարդը չփորձի փախչելով փրկվել: Հետաքրքիրն ու ակնհայտն այստեղ այն է, որ չփախչելը կյանքի համար ավելի մեծ վտանգ չի պարունակում, քան փախչելով փրկվելու փորձը:

Եվ իսկապես, ինչ էր հնարավոր «Նազար-հասարակություն» փոխհարաբերության այն տարբերակից, որի դեպքում նա կգնար դեպի իր համար այդ մեծ սարսափը: Իսկ Նազարը հայտնվել է մի իրավիճակում, որ, ուզի, թե չուզի, արդեն պիտի անի այդ քայլը: Նշանակալին այն է, որ նա երբեք էլ չի ազատվում մեծ աշխարհից ունեցած իր պաթոլոգիկ վախից: Բայց անձարակի նրա վիճակը նրան հրում է դեպի այդ անիմանալին, ու նա, սարսափելով հանդերձ, գնում է առաջ: Անձարակությունը նրան քայլ է պարտադրում: Նազարի դեպքում դա խելագարի քայլ է, բայց համարժեք այն օրինաչափությանը, կենսական այն ճշմարտությանը, որը ժողովուրդը փաստարկել է այսպես. **«Մինչև խելոքը մտածեց, գիժը խփեց-գետն անցավ»:** Գիժն առանց ծանր ու թեթև անելու գետն անցնում է այնտեղից, որտեղ խելոքը մի քանի անգամ «կզցեր-կբռներ»: Ընդ որում, չի կարելի մտածել, թե նա այդ բանն անում է՝ անգիտանալով վտանգը (ինչպես ասացի, նա մինչև վերջ էլ սարսափում է այն աշխարհից, դեպի որը գնում է): Բայց անում է: Անում է այնտեղ, ուր խելոքը դեմ ու կողմ հանգամանքները հաշվարկելուց հետո շատ հավանական է, որ այդ քայլը չաներ: Սա է նրա կենսական դիրքորոշման նոր վարքագծի պարադոքսալության դրսևորումը: Նա անում է աշխարհի հետ իր հարաբերությունները նոր ձև ու կշռի մեջ դնելու համար առաջին-անհրաժեշտ քայլը: Դա է նրա հետագա հաջողության կարևորագույն նախազրավականը և ոչ թե «համաժողովրդական համաձարակ-հիմարացումը»¹⁰: Ի վերջո Նազարն անում է մի բան,

¹⁰ Հախվերդյան Լ., Թումանյանի աշխարհը, Եր., 1966, էջ 405:

որի դիմաց վարձատրվում է: Ուրիշ հարց է, որ այդ վարձը տվողը կարող էր և սխալվել իր տվածի չափի մեջ:

Ուստի եթե մի կողմ թողնենք Նազարի նկարագրի վերաբերյալ Հովհ. Թումանյանի առաջին իսկ տողերից ձևավորված տպավորությունը և խնդիրը դիտարկենք ավելի չեզոք մոտեցմամբ, ապա պիտի ընդունենք, որ գործ ունենք կենսական շատ ավելի հետաքրքիր իրավիճակի հետ, քան թվում է առաջին հայացքից: Նազարն օրեր շարունակ չի մնում իր դռանը կպած, համառորեն չի խնդրում-աղաչում իր կնոջը, որ իրեն ներս թողնի (գուցե նաև նրանից, որ կնոջ վտարող մերժումն էր կտրուկ-անգիջում): Թվում է, թե հակառակը պետք է լիներ: Բայց ոչ. թեկուզ ստիպված, բայց նա ընդունում է կյանքի մարտահրավերը՝ գնալով անձարակի իր վիճակից ելքի ամենաաներևակայելի տարբերակին: **Նազարը հոգեբանորեն և գործնականում թիկունքում է թողնում իր հին կենսակերպը, անցնում է այն սահմանը, որից հետո իր համար կյանքը նոր բովանդակություն և ընթացք էր ստանալու:** Նա անգամ երազել չէր կարող իրեն առաջիկայում սպասվող հաջողությունների մասին: Ոչ մի երաշխիք էլ չուներ, որ իր համար ամեն ինչ նպաստավոր ընթացք է ունենալու: Բայց ակնհայտ է, որ հեռանալով տնից՝ իր կյանքը վերափոխելու համար առաջին կարևորագույն քայլն է անում:

Հեքիաթի այս պատկերում նկարագրվածը (Նազարի ու կնոջ կոնֆլիկտը և դրա հետևանքը) հետաքրքիր նյութ է նաև հոգեբանական վերլուծության համար: Կերպարների փոխհարաբերության և կենսակերպի ու շաղիի դիտարկումն անմիջապես հուշում է, որ այստեղ ակնհայտ է սնողի (ծնող) և կախյալ սնվողի (երեխա) փոխհարաբերությունը¹¹: Նյութի հոգեվերլուծական իմաստի համար միանգամայն երկրորդական է այն, որ նրանք, ըստ սոցիալական կարգավիճակի, կին ու ամուսին են: Առավել կարևոր է նրանց միջանձնային հարաբերությունների բնույթը, հոգեբանական կախվածությունները, որոնցով կարգավորվում է իրենց կեցությունը: Իսկ դրանում, ինչպես նշեցի, ակնհայտ է Նազարի կախյալ և կնոջ իշխող (դոմինանտ) կարգավիճակը: Հետևաբար միանգամայն օրինաչափ է, որ Նազարը և՛ ալարկոտ է, և՛ պարծենկոտ, և՛ անշնորհք ու ամենակարևորը՝ վախկոտ: Սա բնորոշ է սնողից դեռևս չկտրված, նրա հաշվին ու շնորհիվ գոյատևող յուրաքանչյուր արարածի:

Սրանից ելնելով՝ միանգամայն օրինաչափ պիտի համարել նաև այն, ինչ տեղի է ունենում Նազարի հետ: Նկատի ունենք կնոջ կողմից կոպտորեն վտարվելը, թվում է, թե իր, բայց ըստ դոմինանտության՝ կնոջ կողմից տան դուռը երեսին մեկընդմիջտ փակվելը: Չէ՞ որ յուրաքանչյուր սնուցող ի վերջո մի օր իրենից հեռացնում, դեպի ինքնուրույն կյանք է հրում իր սնուցածին, իր հաշվին գոյատևողին: Դա ինքնուրույն կյանքի առաջին քայլն անելու այն պարտադրանքն է, առանց որի չի կարող կայանալ ոչ մի շնչավոր արարած: Այս անխուսափելի կենսական հանգամանքը (ինքնուրույն կյանքով ապրելու պարտադրանքը) վտարվածի մեջ առաջացնում կամ ընդգծում

¹¹ Այս դիտարկման հոգեվերլուծական տեսանկյան վերաբերյալ մեր կասկածները փարատվեցին հոգեբ. գիտ. թեկնածու, դոցենտ Ռ. Պողոսյանի հետ գրույցի ժամանակ: Նա հավաստեց, որ այդպիսի դիտարկումը հոգեվերլուծության առումով համոզիչ է:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Ե (ԺԵ) քառի, թիվ 3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

է երկու տարբեր զգացումներ: **Առաջինը՝** վիրավորվածություն սնուցողից: Դա օտարացնող, հեռացնող այն կարևոր նախապայմանն է, առանց որի չի կարող կտրվել իր նախկին հենարանից, չի կարող ինքնություն կյանքի ճանապարհի առաջին քայլն անել: **Երկրորդ** կարևոր զգացումն է սկզբանե առկա վախի սաստկացումն է անծանոթ, անիմանալի աշխարհից, ապագայից, դեպի որը պիտի գնա:

Հովհ. Թումանյանը կեցության, մարդ արարածի նկարագրի օրինաչափությունների իմացությամբ է ամբողջացնում հեքիաթի կերպարներն ու պատկերները: Վերն ասվածի առումով ևս հնարավոր չէ որևէ պակասություն ցույց տալ: Ահա իրեն վտարած կնոջից վիրավորված Նազարի վիճակն ու մտածմունքը. «Ճարը կտրած՝ գնում է, մի պատի տակի կույ է գալի, դողալով գիշերն անց է կացնում, մինչև լույսը բացվում է: Նազարը խռոված, պատի տակին արևկող արած սպասում է, որ կինը գա, տուն տանի ...» (236): Բայց կինը չի գալիս: Քիչ անց այդ վիրավորվածությունը պետք է խոսի արդեն պարծենկոտությանը շաղախված. «Ես, որ մի զարկով կարող եմ հազար շունչ կենդանի ջարդել, էլ ի՞նչ եմ էս անպիտան կնկա կողքին վեր ընկել...» (236): Իսկ տերտերին այդ մասին ասում է իր անելիքը որոշած մարդու վճռականությամբ («Պատմում է (Նազարը-Ս. Ա.) իր քաջագործությունը (ձանձերին կոտորելը-Ս. Ա.) ու հետն էլ հայտնում է, որ պետք է իր կնկանից կորչի...» (236): Ինչ մնում է աշխարհից, ինքնություն կյանքից Նազարի ներաշխարհում ի սկզբանե հիմնավորապես ամրապնդված վախին, արդեն ասվել է: Միայն հավելեմ, որ այն ավելի է ընդգծվում:

Հեքիաթի առաջին դրվագին վերաբերող հոգեբանական վերլուծությունների մեջ անպայման ներառելի կարևոր պատկեր է Նազարի ձանձասպան քաջագործության պատկերը: Սա հերոսի պատրանքային ինքնաձանաչման, ինքնաարժևորման դրսևորումն է: Ինքը լավ գիտի, որ անօրինակ վախկոտ է: Դրա համար էլ առաջին հերթին հենց ինքն իր աչքում, ինքն իր ներաշխարհում ինքնահաստատվելու, ինքն իրեն հակառակն ապացուցելու կարիք ունի: Լավ գիտի նաև, որ իր կոտորածն ընդամենը մի քանի ձանձ է: Բայց «Մտածում է, որ հազարից պակաս չի լինի» (236): Սա է Նազարի մասին հյուսվելիք առասպելի առաջին հիմնաքարը: Եվ անպայման նշանակալի է, որ այն դնողը հենց ինքն է: Նա իր մեջ այլ Նազար է հայտածում:

Իր հերոսականության վերաբերյալ այս պաթետիկ տրամադրվածությունը շարունակվում է՝ հասնելով նման հոգեվիճակին շատ բնորոշ չափազանցության. «-Վանհ,-,- ես էս տղամարդն եմ էլել ու մինչև էսօր չեմ իմացել... Ես, որ մի զարկով կարող եմ հազար շունչ կենդանի ջարդել...» (236): Սա իր համար կենսական նշանակության գյուտ է, որի մեջ կա երկու կարևորագույն իրողություն: Իր համար հայտնագործություն է հերոսական տղամարդու իր նկարագիրը: Եվ հետո՝ ինքը լավ գիտի, որ իր կոտորածն ընդամենը ձանձ է, այն էլ՝ մի քանի հատ: Բայց ո՞ր իրականության մեջ ձանձ կոտորելը, ո՞ր «հազար շունչ կենդանի ջարդել»-ը: Եվ հետաքրքիրն այն է, որ իրեն ներքաշելով այդ խաղի մեջ՝ Նազարը լրջորեն հավատում է իր հերոսականությանը: Մեծ աշխարհից սարսափող այդ մարդուկն

իր երևակայության մեջ մի փոքրիկ աշխարհ է հորինում, ուր ինքն ան-երևակայելի քաջ է: Նազարը բանը (իր արժեքն իր երևակայության մեջ) հենց այդպես էլ ներկայացնում է տերտերին: Տերտերն արձանագրում է իրեն ներկայացվածը՝ դրան տալով գրագետի սահուն չափատողերի ձև.

**«Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին գարկի՝ ջարդի հազար» (238):**

Նախորդ ողջ ասվածը մի նպատակ ուներ. ցույց տալ, որ իր անից վտարված և դեպի անհայտություն գնացող Նազարը թե՛ կենսական իրավիճակների, թե՛ ներաշխարհային անցուդարձի առումով արդեն զգալիորեն տարբեր էր կնոջ ստվերի տակ ապրող Նազարից: Այս էական իրողության անտեսումը հեքիաթի և Նազարի կերպարի առկա մեկնաբանությունների կարևոր պակասություններից է:

Ինչ խոսք, տերտերի դերն այնքան անմեղ-չնչին չէ Նազարի ճակատագրում և հեքիաթի գաղափարաբանության մեջ, ինչպես կարող է թվալ վերն ասվածից: Նա փալասի մի կտորի վրա ձեռաց գրում-տալիս է Նազարի խնդրածը: Իր երևակայության մեջ նորահայտ այդ քաջագործի համագյուղացին է տերտերը: Նազարի համար լուրջ նշանակություն ունեցող իր ինքնաձանաչման գյուղը տերտերի աչքում այնքան անլուրջ մի բան է, որ որոշում է կատակել-ծաղրել այն՝ գլուխն ազատելով իրենից ջանք չպահանջող երկտողով¹²: Հեքիաթի շարունակության մեջ տերտերի և՛ այդ վերաբերմունքը, և՛ երկտողը իմաստավորվելու են միանգամայն անսպասելի ձևերով: Սակայն այդ մասին քիչ հետո: Բայց մինչ այդ հարկ է չանտեսել հեքիաթի մեկնաբանությունների մեջ ամրակայված այն մտտեցումը, ըստ որի Նազարի կյանքում ճակատագրական փոփոխությունների կարևորագույն նախադրյալը տերտերի երկտողն է:

Դրանով անտեսվում է հոգեբանական այն մեծ ցնցումը ինչը տեղի է ունենում Նազարի ներաշխարհում մինչ երկտող-դրոշակը ձեռք բերելը: Չէ՞ որ այդ դրոշակը հնարավոր դարձավ միայն վտարման սարսափով անցածի համար: Մի բան, որ աներևակայելի-անհնար էր կնոջ փեշից դեռևս չպոկված Նազարի համար: Եթե այդ վերափոխումը չլիներ, և նա, թեկուզ սարսափելով, համենայնդեպս, պատրաստ չլիներ գնալ դեպի անհիմնալի աշխարհը, դրոշակն իր կյանքում փոփոխությունների հանգեցնող որևէ նշանակություն չէր կարող ունենալ: Դրանում համոզվելու համար ընդամենը պետք է մտովի պատկերացնել Նազարին իր գյուղում, իրեն լավ ձանաչող համագյուղացիների շրջապատում կամ թեկուզ իր բակում՝ դրոշակը թիկունքին ծածանվելիս: Կասկածից դուրս է, որ գյուղական համայնքի աչքում դա ևս մի հարմար առիթ կլիներ Նազարի բարոյական ոչնչացման, ծաղր ու ծանակի:

Հեքիաթի առաջին դրվագի վերլուծությունն ուզում ենք ավարտել Նազարի հոգեբանական վերափոխության մեկ այլ գրավականի փաստար-

¹² Հետևանքների համար չմտահոգվելով՝ մենք էլ ենք հաճախ այդպես վարվում. լավամարդ դառնալով՝ մեր այդ-ի հավաստիքը տալով նրանց, ովքեր իրենց արժանիքների պակասը լրացնում են պնդերեսի համառությամբ, խեղձի կաշուն-զգվելի նվաստությամբ կամ էլ հեռանկար չունեցողի թվացյալ անվտանգությամբ:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013
Ե (ԺԵ) քառի, թիվ 3

ՎԻՄ համահայկական հանդես

կումով: Դա այն պատրաստությունն է, որով նա գնում է ճակատագրին ընդառաջ. ոչ թե ուղղակի հեռանում է՝ ամեն ինչ թողնելով ճակատագրի քմահաճույքին, այլ գնում է՝ խելքը կտրածի չափով պատրաստվելով: Նա արդեն ունի իր ինքնության վկայական գիրը՝ դրոշակ-խորհրդանիշի վրա, զինված է (թեկուզ և ժանգոտած թրի կտորով), հեծյալ է՝ աղքատիկ իր կեցությանը հակառակ: Այս երեք բաղկացուցիչներից ոչ մեկը երկրորդական, հեքիաթում չիմաստավորվող խորհրդանիշ չէ, սակայն յուրաքանչյուրի մասին իր տեղում: Այս պահին միայն նշենք, որ Նազարի գրաստը հարևանի էջն էր: Նա գողացել էր այդ կենդանուն: Մի բան, որի համարձակությունը նա երբեք չէր ունենա, քանի դեռ ապրում էր կնոջ հովանու ներքո: Ահա այսպիսին է Նազարն իր գյուղը լքելիս:

2. Հերոսի կայացման հանգրվանները հեքիաթի երկրորդ և երրորդ դրվագներում

«Քաջ Նազարը» հեքիաթի երկրորդ և հաջորդ բոլոր դրվագները ներկայացնում են հերոսի կյանքի էական իրադարձություններն իր բնակավայրը լքելուց հետո: Երկրորդն առանձնանում է նրանով, որ նկարագրում է նրա առաջին անմիջական շփումն այն անիմանալիի հետ, որից այնքան սարսափում էր: Դա ոչ անմիջական, մի տեսակ հեռակա, չկայացած հանդիպումն է անտառով անցնող գյուղացուն:

Գյուղն արդեն լքած Նազարի նկարագրի իմաստով այս հատվածը որևէ նոր բան չի պարունակում: Նույն մարդն է՝ մեզ արդեն ծանոթ երկու էական բնութագրերով: **Առաջինը** սարսափն է անծանոթ աշխարհից, իր գլխին գալիքից, **երկրորդը**՝ վճռականությունը, որով, համենայնդեպս, գնում է դեպի այդ անիմանալին. «Իրենց գյուղից դուրս է գալի, մի ձամփա է ընկնում ու գնում: Ինքն էլ չի իմանում, թե էդ ձամփեն ուր է տանում» (237): Ինքն էլ չի իմանում, բայց գնում է: Կարևորն այդ գնալն է, իսկ նա արդեն ճանապարհ է գնում ոչ միայն ուղղակի իմաստով. դա խորհրդանշում է իր նոր կյանքի սկիզբը: Թիկունքում դեռևս զգում է իր գյուղի ներկայությունը, բայց ետ չի դառնում: Թեև հետո էլի է հիշելու իր գյուղը, նույնիսկ փախուստի տրամադրվածություն է ունենալու: Բայց կարևորն այդ դրվագում նրա պահվածքն է, ետդարձի ներքին մղումները հաղթահարելու կամքը, որը, ի պատիվ իրեն, դրսևորում է:

Իսկ որ իրեն համակած սարսափից սկսում է գոռալ-գոռոռալ, որին ձայնակցում է նաև ավանակը («...հետն էլ մյուս կողմից էջն է սկսում զռալ...») (237), միանգամայն բնական է: Այս բազմաձայն սիմֆոնիայի հոգեբանական հիմքը երկակի է: Այն վախի արդյունք է, բայց նույնիսկ ենթագիտակցաբար գործադրվում է հենց վախի հաղթահարման համար: Դիմացը ելած անտառի ենթադրվող վտանգներից սարսափը սաստկանում է («...սարսափած սկսում է գոռոռալ, ո՛նց գոռոռալ՝ ականջո՞ղ ոչ լսի ...») (237): Սա շոկային սարսափի դրսևորում է:

Հեքիաթի երկրորդ դրվագի առանցքային մասն անտառի տեսարանն է՝ Նազարի և պատահական անցորդ գյուղացու չկայացած հանդիպման վայրը: Այս հերոսին Հովհ. Թումանյանը ներկայացնում է նվազագույն ան-

հրաժեշտի չափով: (Իմիջիայրոց, նրա ողջ ստեղծագործության մեջ նույն սկզբունքով են ներկայացվում նույնիսկ գլխավոր հերոսները): Նազարից սրա առաջին ակնհայտ տարբերությունն այն է, որ անտառ մտնելու չափ համարձակ է: Սոցիալական կարգավիճակի առումով էլ Նազարից մի բանով ավել է. ձի ունի: Նազարինն ավանակ է, այն էլ՝ գողացված: Բայց այս գյուղացին էականորեն տարբեր է Նազարից, որը, հակառակ իր սարսափին, գնում է դեպի անիմանալին ու վտանգավորը: Այս գյուղացին չգիտի կամ իրեն հաշիվ չի տալիս, որ մարդն աղմուկ-իրարանցում է սարքում ոչ միայն վախեցնելու համար («...կա-չկա՝ էս ավազակներ են...») (237), այլ նաև վախից (Նազարի տարբերակը¹³): Դրանից է, որ նրա մեջ անմիջապես գլուխ բարձրացրած ինքնապաշտպանական բնագործ կյանքին սպառնացող վտանգ է կանխազգում. «Վայ ... հնց թե, իմն էլ էստեղ էր հատել ...» (237): Կյանքին սպառնացող ենթադրյալ վտանգից սա այնքան է գլուխը կորցնում, որ ձին թողած՝ ոտքով է ճողոպրում: Սա արդեն խուճապի դրսևորում է:

Այս դրվագի վերջում Հովի. Թումանյանի հեգնանքը («Բախտդ սիրեմ, Քաջ Նազար...») (237) ոչ այնքան հերոսին է վերաբերում, որքան կենսական իրավիճակին: Իսկ դա հետևյալն է: Նազարը ոչինչ չի անում ձի ունենալու համար, բայց ունենում է: Իրեն հանդիպած մարդը թե՛ նույնիսկ ավելի վախկոտ էլ չէ, քան ինքը, համենայնդեպս իր մեջ ուժ կամ շրջահայեցություն չունի այնքան, որ կարողանա հաղթահարել թվում է թե կյանքը, ապրելը հեշտացնող ու սովորական դարձած ստանդարտ վարքագիծ դրսևորելու մեքենայական պահվածքը: Ըստ վերևում բերված օրինակի՝ նա նախընտրում է ենթադրյալ արջից փախչելով փրկվելու տարբերակը: Եվ կորցնում է ունեցածը: Շահում է նա, ով վախենալով հանդերձ՝ գնում է դեպի արջը:

Նազարը միանգամայն արժանի էր իր էջն ուրիշի ձիով փոխարինելուն: Հեքիաթի հաջորդ՝ **երրորդ դրվագը** նրա լավագույն հատվածներից է: Նախորդ երկուսում հեղինակն աշխատել է առավելապես անհատի ներաշխարհային իրողությունների ու դրանց դրսևորումների պատկերման վրա: Երրորդը նշանակալի է նրանով, որ անհատական և հասարակական վարքագծի, դրանց փոխալսմանավորված դրսևորումների, բնորոշ կենսական օրինաչափությունների ցուցադրման բազմապլան գլուխգործոց է: Այստեղ ևս հնարավոր չէ չհիանալ հանձարեղ գրողի մարդագիտությամբ, հանրային կյանքին բնորոշ դարավոր օրինաչափությունների իմացությամբ, դրանց համոզիչ ու ճշգրիտ արտացոլմամբ:

«Քաջ Նազարի» երրորդ դրվագի սկիզբը հեքիաթի պոետիկային բնորոշ սկսվածք ունի. «Շատ է գնում, քիչ է գնում, շատն ու քիչն էլ ինքը կիմանար, գնում է ընկնում մի գյուղ...» (237): Ընդհանրապես հեքիաթներին բնորոշ կայուն սկսվածքներն անսպասման իմաստավորված են ժանրի պատումարովանդակային շրջանակում: Օրինակ՝ «Քաջ Նազարի» սկիզբը («Լինում է, չի լինում ...») (235) այս հեքիաթի բովանդակային դաշտում չունի հավելյալ իմաստ, քան ունի ցանկացած հեքիաթի համար: Սա նշա-

13 Որքան մեզ հայտնի է, ոչ ոք դեռ չի ձշտել, թե մարդու վարքագծում այդ երկուսից որն է ավելի հաճախականը:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Ե (ԺԵ) ԳԱՐԻ, ԹԻՎ 3 (43) ԽՈՒԽ-ՄԵԿՐԱԲԵՐ, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

նակում է, որ ասելիքի առումով ոչ այնքան կարևորվում են ներկայացվող իրադարձությունները, դրանց փաստացի համոզչությունը, որքանով դրանցով փոխանցվող կենսական ճշմարտությունը, խոսքի հասցեագրված բովանդակությունը: Ավելի պարզ ասած՝ դա ի սկզբանե հուշում է, որ հորինվածքի կերպարներն ու իրադարձությունները զգալի չափով պայմանական են: Գեղարվեստական այդ պայմանականությունն ընդգծված դրսևորվում է հատկապես կենդանական և հրաշապատում հեքիաթներում:

Ինչ մնում է Հովհ. Թումանյանի հեքիաթի երրորդ դրվագի սկսվածքին, ապա այն ենթատեքստային կարևոր իմաստ ունի: Դրվագն այդպես էլ սկսվում է. «Շատ է գնում, քիչ է գնում, շատն ու քիչն էլ ինքը կիմանար, գնում է ընկնում մի գյուղ ... » (237): Դա շատ որոշակի իմաստ ունի. մինչ հարսանքավոր գյուղ հասնելը նա իր նոր կենսակերպի որոշակի ճանապարհն էր անցել: Դա միայն ժամանակ չէ, որ անցել էր: Դա թափառական մարդու անցած կյանքի ժամանակահատվածն է: Հեղինակը չի մանրամասնում այդ ընթացքում նրա գլխով անցածը: Բայց պարզ է, որ անտառի պատկերից մինչև հարսանքավորների գյուղ հասնելը նա իր համար արդեն կուտակել էր կարևոր մի արժեք, որն ընդունված է անվանել կենսափորձ:

Այդպես էլ պիտի լիներ: Նա վաղուց ետևում էր թողել իր գյուղը: Այն միջավայրը, որն իր յուրաքանչյուր խոսքն ու արարքը մատի փաթաթան կդարձնեք ըստ առկա շարունի (Վախկոտ Նազար)՝ չմոռանալով նրան ծիծաղով ոչնչացնելու հանրային վերաբերմունքի ձևավորված անհրաժեշտությունը: Այդպես է հանրությունը մարդուն պահում նրա նկարագրի վերաբերյալ իր արդեն ձևավորած կարծիքի սահմաններում: Նազարը հեռացել է այդ միջավայրից՝ դառնալու համար մի բան, որն իրեն երբեք չէր հաջողվի իր գյուղում: Այդ ճանապարհին նա կարող էր և վերջնականապես ձախողվել: Բայց այս դրվագում նրա վարքագիծը հակառակն է ցույց տալիս:

Նազարը մի այնպիսի անվրդով ինքնավստահությամբ է մտնում անծանոթ գյուղ, գնում դեպի զուռնայի ձայնը և բազմամարդ հարսանքատուն, որ զարմանք է առաջացնում: Ասես դա մեզ ծանոթ մարդը չէ: Բայց ինքն է՝ անցած ժամանակի մեջ կենսափորձով հարստացած: Ամենքին բարևելով ներկայանալը, ներս մտնելու հրավերքն էլ մեծավարի անխոս ընդունելը, «սուփրի վերի ծերին» (238) նստելուց չխորշելը (դա ամենապատվավոր տեղն է) իր նոր նկարագրին համարժեք վարքագիծ է: Տպավորությունն այնպիսին է, որ Նազարն ասես իրեն վաղուց ծանոթ միջավայրում է և ոչ թե «ղոնախ» (238), իսկ «սուփրի վերի ծերի» պատիվն էլ՝ իր համար սովորական կարգավիճակ: Այսքանով Նազարը գրեթե ավարտում է տվյալ դրվագում իր անելիքը: Մնացյալ ողջ ընթացքում լուռ ու մունջ հետևում է հարսանքատանն իր շուրջը ծավալվող մթնոլորտին:

Հովհ. Թումանյանը զարմանալի վարպետությամբ է նկարագրում առասպելաճնության այն տարբերակը, որում առաջնահերթ կարևորություն ունի ոչ թե առասպելի օբյեկտը, այլ առասպել հորինող հանրության առասպելաճին նախատրամադրվածությունը¹⁴:

14 Երևակայությամբ հորինվող անիրական պատմության վերաբերյալ տե՛ս հեղինակի «Եղե-

Եվ այսպես՝ հասարակական մի միջավայր, որի բաղկացուցիչն է նաև Նազարը: Այն առաջին հերթին աչքի է ընկնում հյուրասիրությամբ և հյուրամեծարությամբ: Բայց ուշադիր դիտարկումը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ դրական իմաստավորմամբ ընկալվող այս վարքականոնները երկու հակադիր երես ունեն՝ մարդասիրություն և ստրկամտություն: Դրսևորման տեղն ու հանգամանքներն են որոշակիացում, թե որ տարբերակի հետ գործ ունենք: Նազարին հյուրընկալող սոցիումին բնորոշ է ստրկամտության տարբերակը: Հեքիաթի հետագա շարադրանքը ցույց է տալիս, որ գործ ունենք հիմնականում խեղճ, անպաշտպան, ծառայամիտ, ստորաքարշության պատրաստ մարդկանց հետ, ովքեր պարզ չէ, թե ինչու են անծանոթ, դեռևս որևէ արժանիքով չառանձնացած մարդուն արժանացնում իրենց սեղանի (այն էլ՝ հարսանեկան) գլխավերևում բազմելու պատվին:

Նազարը լուռ է. իրեն պատիվների արժանացնող ու մեծարող մարդկանց չի փոխադարձում գոնե մեկ-երկու բառով: Նա արդեն յուրացրել է, որ լուռությունը ոսկի է, իսկ այդ իրավիճակում այն իր օգտին է: Մինչդեռ հարսանքատունն ակտիվորեն հետաքրքրվում է նորեկով: Տեղեկատու առաջին աղբյուրը Նազարի դրոշակի վրայի գիրն է, որը, տառկապ անելով, մի կերպ կարդում է տերտերը: Տպավորությունը ցնցող է. «Կարդում է ու զարհուրած հայտնում է իր կողքի նստածին, սա էլ՝ երրորդին, երրորդը՝ չորրորդին. էսպեսով հասնում է մինչև դռան տակը, ու ամբողջ հարսանքատունը դրմբում է թե՛ բա՛ չես ասիլ, նորեկ դոնախն է ինքը՝

**«Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին գարկի՝ ջարդի հազար» (238):**

Այս փոքրիկ տեսարանը երկու նշանակալի իրողություն է ամփոփում Քաջ Նազարի հետագա կայացման առումով: Նախ՝ գիրը: Նորահայտ հյուրին ոչ ոք չի ձանաչում, բայց նա ներկայացել է թիկունքին անրացված անհասարստ գրով: Անգրագետ ու թերևս դրա պատճառով գրի խորհրդավոր, պաշտամունքային ընկալմամբ առանձնացող նահապետական-ավանդական նիստուկացի այս հանրությունը չի կարող անտարբեր լինել այն արձանագիր տեքստի նկատմամբ, որից զարհուրում է իրենց միջից գիր իմացող միակ մարդն անգամ¹⁵: Սա այդ մշակութային միջավայրի համար միանգամայն օրինաչափ, համարժեք վերաբերմունք է իրողությանը:

Հետո՝ տերտերների դերը Նազարի վերելքի մեջ: Հեքիաթում ներկայացվող կենսակերպի տարբերակում տերտերը հասարակության գրա-

լություն, պատմություն և ազգային ինքնագիտակցություն» հոդվածը, «ՎԷՆ», 2011, N 2 (34):
15 Իմիջիայլոց, Հովհ. Թումանյանի ստեղծագործության մեջ մշակութային այս օրինաչափությունը մի անգամ չէ, որ արտացոլվել է: Նույնը, օրինակ, ամկա է նաև «Հառայանք» պոեմում, իհարկե, ըստ ներկայացվող կենսական հանգամանքների իմաստավորման:

**Քաջ արին տեսան գրած գակոնում,
Թե չորան Չասին Միրիք է գընում:**

Խոսքի (մանավանդ գրավոր) պաշտամունքային ընկալման, հասարակական հեղինակության, մշակութային բազմազան գործառույթների վերաբերյալ ավելի մանրամասն կարելի է կարդալ մեր «Լեզուն և գիրը մշակույթի համակարգում», Եր., 2012, ուսումնական ձեռնարկում:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
Ե (ԺԵ) ԳԱՐԻ, ԹԻՎ 3 (43) ԽՈՒԽԱ-ՄԵԿՐԵՄԵՐ, 2013
ՎԷՄ համահայկական հանդես

գետն է (մերօրյա ըմբռնմամբ՝ գրեթե մտավորական): Մրանցից առաջինը՝ Նազարի ձեռքն է տալիս գորավոր մի երկտող՝ անլրջորեն անտեսելով իր արարքի հնարավոր հասարակական հետևանքները: Իսկ երկրորդն իր հեղինակավոր զարհուրանքով ուղղակի հիպնոսացնում է հարսանքավորներին: Սա է գրավոր խոսքը գործադրելու հասարակական բացառիկ իրավասություն ունեցող մարդկանց (տերտեր-մտավորական) դերը Նազարի կյանքում: Այստեղ կարելի է դիտարկել նաև աշուղի վարքը, բայց այն թողնենք քիչ հետո:

Հիմնաքարը դրված է, անհվը պատրաստ է պտտվելու: Ու սկսվում է... Խեղճ ու թշվառ, հերոսականությունից գուրկ և հերոսականության կարոտ հասարակությունը կարիք ունի առասպելի: Եվ ծավալվում է այդ առասպելը ցանկացած հասարակությունից անպակաս սուտասան, պարծենկոտ, ստորաքարշ մի քանիսի սուտ վկայությամբ («Քաջ Նազարն է, հա՛մ ... - բացականչում է պարծենկոտի մինը,- ինչքան է փոխվել. միանգամից լավ չճանաչեցի...»

Եվ մարդիկ են գտնվում, որ պատմում են նրա արած քաջագործությունները, հին ծանոթությունն ու միասին անցկացրած օրերը» (238), լուծում են Նազարի վարքագծային (ծառա ունենալ-չունենալու) խնդիրը եզակիության վերաբերյալ իմաստակությամբ («...Մի անգամ ես հարցրի, ասավ՝ ծառան ինչ եմ անում, ամբողջ աշխարհքն իմ ծառան է ու իմ ծառան» (238) և այլն:

Նազարի վերաբերյալ առասպելի հիմնաքարերն ավելացված են. մնացյալի իրագործումն ավելի հեշտ է: Ու հենց այդ պահին համեմատաբար պթափ, սկեպտիկ-կասկածոտ մեկը, որ ավելի շատ տեսածին է հավատում, քան լսածին, տալիս է հարց, որը կարող էր փլուզել իրենց հարսանիքը թողած և չլսած-չտեսած հերոսականության առասպելը հորինողների ոգևորությունը. «-Հասպա ինչպե՛ս է, որ մի կարգին թուր չունի, էս ժանգոտ երկաթի կտորն է մեջքին կապել» (239):

Պոտենցյալ ընդդիմությունն օրոցքում խեղդող պատասխանը՝ բացառիկ իմաստության ձևով, բայց իրականում՝ սովետական դեմագոգիա, չի ուշանում.

«-Շնորհքն էլ հենց դրա մեջն է, է՛, որ էս ժանգոտ երկաթի կտորով մին զարկես, ջարդես հազար, թե չէ՝ լավ թրով ի՛նչ կա որ, սովորական քաջերն էլ են ջարդում» (239):

Մնացյալն արդեն ըստ նման իրավիճակներին բնորոշ ստանդարտի՝ կենաց-բաժակաձառեր, Նազարի ներկայությունից երջանկացածների անկեղծ խոստովանություն և այլն: Առասպելի շենքը կառուցված է: Մնում է այն լցնել որոշակի սոցիալական բովանդակությամբ, որն էլ համապատասխան ոգևորությամբ ու շնորհքով իրականացնում է աշուղ-բանաստեղծը.

**«Խեղճ տկարին դու ապավեն,
Ազատ կանես ամեն ցավեն,
Մեզ կփրկես անիրավեն ...» (239):**

Արվեստի նկատմամբ մեր մեջ դեռևս մանկուց ձևավորվող կանխակալ

հարգալից վերաբերմունքը հաճախ խանգարում է մարդու կյանքում նրա խիստ անհրաժեշտ, անփոխարինելի դրական դերի հետ նաև բացասականը տեսնել-դիտարկելուն: Այս երկրորդն ունենում է տարբեր, կամա-ակամա պատճառներ ու նպատակներ: Խնդիրը մշակութաբանական է, ու այս պահին՝ մեր նպատակից դուրս: Միայն նշենք, որ հեքիաթի աշուղի պաթետիկ կեղծիքը դրա բնորոշ դրսևորումներից է: Իր այս արարքով աշուղը Նազարի կյանքում ունենում է նույն դերակատարությունը, ինչ իրեն նախորդած երկու տերտերները:

Ողջ այդ ընթացքում իրեն համարժեք լրջությամբ պահած Նազարն ընդամենը մի անգամ հառաչում է ու անորոշ ձեռքը թափ տալիս: Անհասկանալիությանը խորհրդավոր նրա այդ ժեստն էլ է իմաստավորվում տեղի ու հանգամանքների ոգուն համարժեք. «Ժողովրդականները խորհրդավոր իրար աչքով են անում, հասկանում են, թե էդ հառաչանքն ու ձեռքի թափ տալը ինչքան բան կնշանակելը ...» (239): Այս ամենի արդյունքը լինում է այն, որ պաշտոնականացվում է Նազարի հանրային ճանաչումն ու անառարկելի հեղինակությունը:

Դրվագում ներկայացված հասարակությունն ու նրա բաղկացուցիչ անհատները համարժեք են իրար: Առասպելը նախաձեռնողների վարքագծում կարելի է ցույց տալ սեփական շահի ակնկալիք. ով գիտի, թե «է-գուց-էլօր» ինչ կստանան Նազարից իրենց անմոռաց ակտիվության դիմաց: Եթե դա էլ չլինի, գոնե շրջապատի աչքում կամրապնդեն իրենց հարգը. քիչ բան չէ, ճանաչել են, նստել-վեր կացել Քաջ Նազարի հետ: Ինչևէ, գտնվել է մեկը, որին այդ էջֆորիկ մթնոլորտում համեմատաբար հեշտ է հերոսացնել նաև այն պատճառով, որ չեն ճանաչում: Նազարը լինելը իրենց շրջապատի մարդկանցից, երբեք չէր արժանանա այդ մեծարանքին: Մա ևս մարդկության կենսափորձային-մշակութային իրողություններից է: Նազարին հերոսացնելով, նրա մասին առասպել հյուսելով՝ այդ մարդիկ իրենց միօրինակ կյանքը լցնում են ինչ-որ նշանակալի բանով, որի ականատեսն ու մասնակիցն են իրենք: Դրանով իրենց կյանքը մի նոր իմաստ է ստանում, կարևորվում իրենց աչքում, իսկ խեղճ, հերոսականությունից զուրկ իրենց կեցությունը լցվում է մտացածին-երևակայական հերոսակա-նությամբ:

4. Հեքիաթի չորրորդ, հինգերորդ և վեցերորդ դրվագները

Սա պատմություն է այն մասին, թե ինչպես է շարունակվում Նազարի հեղինակության պաշտոնականացումը: Արդեն տեսանք, որ նախորդ դրվագում դա իրականացրին մտավորականները, հասարակայնորեն ակտիվ անհատները և ժողովուրդը: Մակայն հասարակության կյանքը միշտ էլ կարիք է ունեցել կազմակերպման ու կառավարման, այսինքն՝ վարչական իշխանության: Նազարը պետք է ընդունվեր նաև այս շրջանակներում: Այլապես կմնար ժողովրդական ասք ու զրույցի իդեալականացված հերոս, որևէ դեր չէր ունենա ամենօրյա-գործնական կյանքում:

Նազարի ինքնահաստատման ճանապարհի այս անհրաժեշտությունն էլ տեղի է ունենում ըստ դարերով կայունացած կարգ ու դրվածքի: Հյուս-

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Ե (ԺԵ) ԳԱՐԻ, ԹԻՎ 3 (43) ԽՈՒՍ-ՄԱԿՐԱՔԵՐ, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

ված առասպելի շնորհիվ նրա համբավն ամենուր ավելի շուտ է տեղ հասնում, քան ինքը: Յոթ հսկա եղբայրներն ակնհայտորեն տպավորված են Նազարի մասին լսածից: Մա մարդու կյանքում խոսքի կարևոր գործառույթներից մեկի՝ նախատրամադրող գործառույթի բնորոշ դրսևորումն է: Ինչ կարող էր տեղի ունենալ, եթե յոթ եղբայր հսկաները հանդիպեին այդ միայնակ գործող հերոսին. չէ՞ որ իրենք յոթ եղբայրներով էին համատեղ հոչակ վաստակել, իսկ նա՝ միայնակ: Այդ հանդիպումը տեղի է ունենում, և հսկաների լսած բանավոր պատմություններին հավելվում է դրոշակի ամենագոր, գրով վկայված փաստարկը: Տերտերի գրած երկտողը Նազարի թալիսմանն է, հզորության փաստարկը, մոգական հմայիլը: Խորհրդանշական է, որ Նազարը յոթ հսկա եղբայրների տիրույթի կանաչ դաշտում դրոշակի ստվերի տակ է պատկում հանգստանալու. անգամ անծանոթ տեղում իրեն դրոշակով պաշտպանված է զգում: Չպետք է մոռանալ, որ սա այն Նազարն է, որը վախենում էր նույնիսկ լույս օրով ոտքը ոտքի առաջ դնել ... իր բնակավայրում:

Ամեն ինչ հոգեբանորեն նախապատրաստված է, որպեսզի սկսի գործել մարդու վարքագծի դարավոր շարունը: Ինչու՞ փորձարկել կամ ստուգել լսած-կարդացածը, անկանխատեսելի իրադրության մեջ հայտնվելու վտանգ ստեղծել: Դրա փոխարեն նախընտրելի է փառաբանված քաջի հետ բարեկամանալը (իրենց փեսա դարձնելու միտքը): Իրարով ամրանալն ավելի նախընտրելի է, քան ռիսկի դաշտում ինչ-ինչ բաներ ստուգելը, մանավանդ որ իրար տալիք-առնելիք էլ չունեն: Մա մարդուն բնորոշ դերային վարքագիծ է՝ ըստ սոցիալական դիրքի: Հեքիաթի պատումային պայմանականության շրջանակներում տեղի ունեցածը կարծես թե լուրջ չափազանցություն է, բայց մշակութային փորձի առումով՝ միանգամայն համոզիչ: Դերային տարբերակված սոցիալական վարքագծի կանոնների խախտումը բարդացնում է կյանքը, իսկ ընդունումը՝ հեշտացնում: Բայց պիտի նաև նկատել, որ երկու տարբերակներն էլ իրենց հետևանքներով լի են դրական ու բացասական կենսական իրողություններով¹⁶:

Հետաքրքիր է, որ այդ ամենից հետո էլ մնացյալը դարձյալ խոսքով է լինում. «Տանում են, ամրոցում պահում, պատվում թագավորին վայել պատվով ու էնքան են խոսում նրա քաջագործություններից, էնքան են գովում, որ իրենց գեղեցիկ քույրը սիրահարվում է վրեն: Ինչ ասել կուզի՝ հարգն ու պատիվն էլ հետն ավելանում է» (241):

Հեքիաթի վերջին երկու՝ **հինգերորդ և վեցերորդ դրվագներն** ընթերցողի առաջ բացում են Նազարի կյանքից ներկայացվող հատվածի վերջին շրջանի իրողությունները: Մրանցում ևս, որպես գործող անձ, առաջին պլանում է համակեցական հաստատված ստանդարտները պահպանելու մեջ շահագրգիռ հասարակությունը: Ընդհանուր պատկերից առանձնացող հատվածը վեցերորդ դրվագի վերջին մասն է՝ արդեն հանրորեն ձանաչված ու ընդունված թագավոր Նազարի կենսափիլիսոփայությամբ¹⁷:

16 Մնառ մարդկանց, սոցիալական խմբերին, նույնիսկ ազգերին բնորոշ դերային վարքագծի դրսևորումները հետաքրքիր նյութ են հասարակագիտական տարբեր մոտեցումներով (փիլիսոփայություն, մշակութաբանություն, պատմագիտություն, սոցիոլոգիա, հոգեբանություն) քննարկման համար:

17 Խոսքն «Մտում են՝ մինչև օրս էլ սպրում ու թագավորում է Նազարը» (245) նախա-

Բայց նշված երկու հաստատվածներում կան հեքիաթի գաղափարաբանության առումով ուշադրության արժանի նոր դրսևորումներ: Նախ այն, որ Նազարն այլևս թափառական հերոս չէ, որի մասին ամենքն էլ գիտեն, բայց ավելի շատ՝ ըստ լսածի: Հիմա նա միանգամայն մատչելի ու հասանելի է, ըստ ձևավորված կարծիքի՝ հանրության ապավենը: Պատահական չէ, որ թե՛ վագրի, թե՛ թշնամի երկրի հարուցած փորձություններից փրկվելու համար անմիջապես նրան են հիշում ու նրա առաջնորդությանն ապավինում. «Ամենքն էլ Նազարի երեսին են մտիկ տալի. վերը՝ աստված, ներքևը՝ մի Քաջ Նազար» (241): Նան. «Էս օխտը հսկան գնում են Քաջ Նազարի մոտ, պատերազմի լուրը հայտնում են, գլուխ են տալի, առաջը կանգնում, հրաման են խնդրում» (244):

Հաջորդ կարևոր իրողությունը, որը թվում է, թե նոր բան չէ և դրա համար էլ արժանի չէ այստեղ մի անդրադարձի ևս, Նազարից անբաժան՝ վախկոտության խնդիրն է: Եվ վագրի, և՛ պատերազմի մասին լսելիս նա վախի նոպա է ունենում, երկու դեպքում էլ ցանկանում «փախչի, ետ գնա իրենց տունը» (241 և 244): Թվում է՝ մեզ լավ ծանոթ Նազարն է՝ իրենից անբաժան վախով: Բայց իրականում միայն այդպես չէ: Այս երկու դեպքում էլ նրա վախը, թեև չափազանց, բայց մարդկայնորեն միանգամայն հասկանալի ու բնական է: Չէ՞ որ Նազար լինելը, թե Աքիլլես, տարօրինակ կլիներ, որ մեն-մենակ վագրի կամ զորքի դեմ գնալիս վախ չունենար: Ուրիշ բան, որ նրա խուճապահար պահվածքը երկու դեպքում էլ գնահատվում է ըստ իր անվան շուրջը ձևավորված առասպելի: Տեսածն ըստ լսածի գնահատելու միևնույն պատրանքային խաբկանքի հոգեվիճակում է նաև թշնամու զորքը, սակայն արդեն ի վնաս իրեն. «Թշնամու զորքերը որ առաջուց համբավը լսել էին, ու ահը սրտներումն էր, էս էլ որ իրենց աչքով տեսնում են (գերանաչափ ճյուղը ձեռքին դեպի իրենց սուրալը-Ս. Ա.)՝ էլ փորներումը սիրտ չի մնում. երես են շուռ տալիս,- փախի՛, որ փախի՛, թե մարդ ես՝ գլուխդ պրծացրու» (244): Միակ բացառությունը Նազարի ձին է: Նրա անխաբ բնագոյը հուշում է, որ հեծյալն «անպետքի մինն է» (244): **Նա ընդամենը կենդանի է, մարդ չէ, որ երևակայական ընդունի ռեալ իրողության տեղ:**

Այս ամենն այսպես: Բայց հինգերորդ և վեցերորդ դրվագներում կա մի կարևոր հանգամանք, որին հեքիաթին անդրադարձողները գրեթե անտեսել են: Նկատի ունենք այդ դրվագների բուն իրադարձությունները՝ վագրին սպանելը և թշնամու զորքին հաղթելը: Երկու դեպքում էլ՝ երկրի ու ժողովրդի համար միանգամայն դրական արդյունք: Ինչ է ստացվում. մեր աչքում ծանակելի, մերժելի հասարակությունը, առաջնորդ դարձնելով և գնալով նույնքան ծանակելի ու մերժելի հերոսի հետևից, կարողանում է ի նպաստ իրեն լուծել կենսական կարևորության խնդիրներ: Ուրեմն ճիշտ դիտարկված համակեցական մի օրինաչափություն ևն: Ինչ է Հովհ. Թումանյանի ասելիքը: Որ առաջնորդի բուն էությունը կարևոր չէ: Կարևորն այն է, թե ինչ հասկանիշների խորհրդանիշ է այդ հանրության համար,

դասությամբ սկսվող պատկերի մասին է: Իմիջիայլոց, նկատի ունենալով այդ կտորի հանրագումարային կարևոր նշանակությունը՝ Հովհ. Թումանյանը, կարծում ենք, հակառակ նրա փոքր ծավալին, դա կարող էր առանձնացնել իբրև կառուցվածքային ինքնուրույն և ամբողջական միավոր:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
Ե (ԺԵ) ԳԱՐԻ, ԹԻՎ 3 (43) ԽՈՒԽ-ՄԵՍԿՆԵՐ, 2013
ՎԷՄ համահայկական հանդես

որը նրա ֆիզիկական-իրական կամ մտովի-երևակայված առաջնորդությամբ կարող է համախուժմբ քաջագործության օրինակներ տալ:

Ինչևէ, պարադոքսն ակնհայտ է: Ու զարմանալի չէ, որ այդ հերոսացած հանրությունն իրեն հասանելիք պատիվներն ու մեծարանքը սիրով սփռում է իր ճանաչած-պաշտոնականացրած առաջնորդի առջև:

5. Հեքիաթի առաջին վերլուծողն ինքը՝ Քաջ Նազարն էր

«Քաջ Նազարը» հեքիաթի բովանդակության կամ ճշմարտության առաջին վերլուծող-բացահայտողը ... նրա հերոսն է՝ Նազարը: Դա իրականացվել է վեցերորդ դրվագի վերջում՝ որպես արդեն թագավոր Նազարի ողջ կյանքի փիլիսոփայական-հանրագումարային ընդհանրացում: Ահա այն. **«Ինչ քաջություն, ինչ խելք, ինչ հանձար. դատարկ բաներ են բոլորը: Բանը մարդու բախտն է: Բախտ ունեն՝ քեֆ արա ...»**(245):

Մինչ այժմ դրվագ առ դրվագ հեքիաթը վերլուծելու մեր նպատակներից մեկն էլ եղել է Նազարի կերպարին բնորոշ կարևոր մի իրողություն ցույց տալը: Խոսքն այդ հերոսի նկարագրում տեղի ունեցող թեն ոչ ցցուն, բայց ակնհայտ փոփոխության մասին է: Մի բան, որը փաստարկված և դիտարկված չէ հեքիաթի վերլուծություններում: Գրականագիտության մեջ ընդունված է նկարագրի փոփոխություն ապրող կերպարին բնորոշել «զարգացող կերպար» արտահայտությամբ: Ընդ որում, հարկ է նկատի ունենալ, որ այս «զարգացում» ասվածը Նազարի կերպարն ապրում է նվարքագծով, ն՝ ներաշխարհով: Տեքստիս նախորդ հատվածներում կերպարի փոփոխվող նկարագրի և վարքագծի մի քանի այդպիսի տեղեր ցույց ենք տվել: Սակայն չենք ուզում անտեսել հետևյալ փաստը ևս:

Խոսքը թագավոր Նազարի կենսափիլիսոփայության մասին է: Դժվար չէ նկատելը, որ այդ միտք-համոզմունքի կրողը էականորեն տարբեր է հեքիաթի առաջին դրվագի Նազարի նկարագրից: Վերջինս տնից դուրս ելնելու համարձակություն անգամ չունենալով՝ հոխորտում է «Շահի քարվանը» (235) կտրելու մասին: Ընդամենը ճանձասպանության մեջ հաջողածը մեծամտանում է ավելի, քան իրենց երևելի քաջագործություններով հայտնի առասպելական հերոսները: Նախկինում իր վախկոտությամբ հայտնի Նազարը հասել է թագ ու փառքի, հռչակվել իբրև առասպելական հերոս: Հերիք չէ՝ կյանքն իրեն արդեն տվել էր հիմքեր հպարտանալու համար ն՝ քաջությամբ, ն՝ խելքով, ն՝ հանձարով, մյուս կողմից էլ այդ մասին իր ականջի տակ գիշեր-ցերեկ մի հանգի ասում ու կրկնում է (և դա օրինաչափ է) պալատական ծառայամիտ բազմությունը. «Ու երբ քաջությունից, խելքից, հանձարից մոտը խոսք են գցում...» (245): Բայց որքան անսպասելի, նույնքան էլ ակնհայտ է, որ Նազարն այլևս առաջվանը չէ. այն էլ այն աստիճան, որ նույնիսկ ժխտում է ... իր վերելքի հանրորեն ճանաչված գրավականները՝ քաջությունը, խելքը, հանձարը. սրանց կարիքը նախկինում շատ ունեցած, հետո այդ որակներն իր անվանն արդեն ամրակցած մարդու իսկապես պարադոքսալ վարքագիծ: Սակայն նույնքան էլ հիմնավոր ու համոզիչ՝ շնորհիվ հանձարեղ ստեղծագործողի կենսագիտության:

Նազարի խոսքը լրջագույն փորձաքար է հեքիաթի բովանդակությունը

մեկնաբանողի համար: Ամենահեշտը, ամենապարզը Նազարի փիլիսոփայությունը հենց բառացի հասկանալն է՝ կարծելով, որ Նազարի օրինակը մի ավելորդ ապացույց է հոգուտ բախտի, երջանիկ պատահականության. «...ակամա թագավորը գոնե խոստովանում է ամեն ինչով միայն իր բախտին պարտական լինելու ճշմարտությունը»¹⁸: Կամ՝ «Վախկոտ, սակավամիտ մարդը իրադարձությունների հաջող դասավորության շնորհիվ գնում-դառնում է մի տերության թագավոր: Պատահականության այս մեծ իշխանությունը շեշտվում է հենց հերոսի եզրափակիչ խոսքով...»¹⁹:

Հազիվ թե դա այնպես է, ինչպես ներկայացվում է մեր գրականագիտության մեջ: Թեկուզ և այն պատճառով, որ հանձարեղ գրողը երբեք չէր գնա պատահական, միջադեպային նշանակության իրադարձությունների մեջ կենսափորձային-ընդհանրացնող ճշմարտություններ ցույց տալուն: Իսկ քաջությունը, խելքը, հանձարը երբեք անկարևոր բաներ չեն լինում, նույնիսկ եթե մարդը բաղկացուցիչն է անհնարին, պայմանական մի համակեցության, որը բռնված է «հիմարության համաձարակով»²⁰:

Մինչդեռ մեթոդաբանորեն շատ կարևոր է հաշվի առնել, որ հերոսի կողմից բախտի գերակայությունը փաստարկելը որոշակի իմացությամբ, կենսակերպի չափ ու կշռով մարդու վերլուծական կարողության դրսևորում է: Ավելի պարզ ասած՝ դա Նազարի ճշմարտությունն է:

Փորձենք Նազարի հայտնաբերած ճշմարտությունը դիտարկել իր ժամանակի և կենսափորձի շրջանակներում: Ասմիջապես ակնհայտ կդառնա, որ նահապետական նիստուկացի մարդը՝ որպես կենսական իրողությունների մեկնաբանություն, բախտից առաջնահերթ, ավելի համոզիչ, բազմախտուն փաստարկ չէր էլ կարող բերել: Այն էլ՝ Նազարի իմացությամբ, մտավոր կարողությամբ: Բախտի փաստարկն, ըստ նրա ըմբռնման, պետք է որ նշանակի եղածի կանխորոշվածություն, ամեն ինչում Աստծո կամքի գերակայություն: Երկուսն էլ՝ մահկանացուի համար անիմանալի ու անբացատրելի: Նույնիսկ մեր օրերում է շատ տարածված ամենօրյա կեցության կարևոր ու անկարևոր անցուդարձերի պատճառականության նման մեկնաբանությունը: Բայց հարկ է նկատի ունենալ, որ, ինչպես նախորդ էջերում տեսանք, Նազարի վարքի, հաջողության մեջ չկա ոչինչ անիմանալի ու անբացատրելի, որը դուրս լինի մարդու և հասարակության կենսափորձից: Նազարը բախտն է համարում իր, իր փորձով՝ նաև ցանկացած մարդու հաջողության երաշխիքը: Դա՝ ըստ աշխարհակառույցի, կեցության օրինաչափությունների վերաբերյալ իր կենսական ժամանակին բնորոշ ըմբռնման: Իսկ սա ակնհայտորեն նահապետական-ավանդական-միջնադարյան է՝ հայտնի իր աստվածակենտրոն մտածողությամբ:

Բայց կա ցանկացած մշակութային արժեքի ընկալման նաև այլ դիտանկյուն՝ սպառողի կենսական ժամանակն իր փորձով և իմացությամբ: Այս դեպքում դա ընթերցողի (մեր) ժամանակն է՝ իրեն բնորոշ աշխարհատեսությամբ, որը հասկանալի պատճառով շատ ավելի ընդարձակ է, ընդ-

18 Հախվերդյան Լ., Թումանյանի աշխարհը, Եր., 1966, էջ 406:

19 Եղիազարյան Ա., Թումանյանի պոետիկան և նրա ժողովրդական ակունքները, Եր., 1990, էջ 94:

20 Հախվերդյան Լ., նույն տեղում, էջ 401:

գրկուն, քան դա հնարավոր էր Նազարի ու իր ժամանակի մարդու համար: Երբ մերօրյա իմացության չափումներով ենք վերլուծում Նազարի վարքը, ապա միանգամայն ակնհայտ է դառնում, որ իր կենսական միջավայրի ու ժամանակների համար Նազարը... ն՝ քաջ է, ն՝ խելոք, ն՝ զարմանալու կարիք չկա, նույնիսկ **հանձարեղ**: Նրա փաստարկած բախտը հենց այս որակների հանրագումարն է: Թեև շարադրանքի նախորդ էջերում դա ցույց է տրվել, սակայն հարցի կարևորությունը նկատի ունենալով՝ մեկ անգամ ևս փաստարկենք ասվածը:

Արդյոք քսմջ է Նազարը: Կարելի է հարցին տալ միանգամայն համառոտ պատասխան՝ այո: Որովհետև ծիծաղելի, վախկոտ, արհամարհված, տնից վտարված Նազարը կյանքի տեր ու թագավոր չդարձավ կույր վիճակահանության, ուսին իջած աղավնու (աստծո պատգամաբեր) ընտրության արդյունքում (այ դա իսկապես կլիներ բախտի պարզև): Նա թագավոր դարձավ, պատիվների, փառքի արժանացավ որոշակի սոցիոմշակութային նկարագիր ունեցող միջավայրում կենսական ուղի անցնելով: Եվ ողջ այդ ընթացքում չգտնվեց մեկը, որն ավելի քաջ լիներ, քան ինքն է:

Միսալ չըմբռնվելու համար նշենք, որ թվարկված որակների իմաստային ընդգրկումը ևս պետք է նկատի ունենալ ոչ թե մերօրյա կամ վերացական չափումներով, այլ Նազարի կենսական հանգամանքներին համարժեքության շրջանակներում, այնպես, ինչպես հեքիաթասացն է դա ներկայացնում: Իսկ այդ հանգամանքներում Նազարն իսկապես քաջ է, որովհետև եթե ցանկացած քաջություն սկսվում է անհնարինն իրագործելու ներքին տրամադրվածությունից, ինքն իրեն հաղթահարելով՝ վճռական քայլեր իրականացնելուց, ապա դա Նազարին բնորոշ է:

Նազարը նաև խելոք է: Թեև այն հարաբերական ըմբռնում է, և չկա խելոքության չափման միավոր, բայց դժվար չէ համոզվել, որ Նազարն իսկապես խելոք է թեկուզ և այն ակնհայտ փաստարկով, որ նա կարողանում է հաշվի առնել իր կյանքի դասերը, կողմնորոշվել ստեղծված հանգամանքներում: Հասկանալի է, որ նրա խելոքությունը գիտնականությանը համադրելի չէ: Այն պասիվ, հայեցողի զգուշավոր շրջահայեցություն է: Այդպիսի խելոքությամբ հնարավոր չէ ակտիվ ներգործություն ունենալ սոցիոմշակութային դաշտի վրա: Սակայն հնարավոր է գլուխն անփորձանք պահել ցանկացած համակեցության մեջ, նույնիսկ բարեկեցության հասնել, տիտղոսակիր ու թագակիր դառնալ, ինչպես Նազարը: Նա մի անգամ անզգուշորեն պարծենկոտ է եղել ու խստորեն պատժվել է: Գրանից հետո ավելի հաճախ լռում է, քան խոսում՝ հետևելով հանգամանքների ընթացքին: Տնից վտարվելուց հետո նրա ն՝ լռությունը, ն՝ խոսքը կյանքի դասը լավ յուրացրածի վարքագիծ է:

Հեքիաթի առաջին դրվագը վերլուծելիս ասել ենք, որ իր բնակավայրից նրա հեռանալը համարժեք է պարադոքսալ վարքագծի դրսևորման: Այդ հեռացումը ենթադրում է, որ նա դեռ պետք է հարմարվի իր համար նոր կենսական հանգամանքներին, ձևավորի համարժեք վարքագիծ: Նազարը զբաղված է դրանով, որի պատճառով էլ նախկին պարծենկոտը, շատախոսը չէ, լուռ հետևում է դեպքերի ընթացքին, փորձում հասկանալ իր ու

աշխարհի նոր հարաբերությունների բնույթը: Պատահական չէ, որ երբ ավարտվում է նոր հանգամանքներում ընթացքի փորձության շրջանը, նա դառնում է իր կենսափորձի փիլիսոփան: Դրա համար էլ հնարավոր չէ ժխտել, որ նրա վարքագիծն իրեն լավ ճանաչող մարդու խելոքության դրսևորում է:

Մեր իմացության մակարդակը հոգեբանորեն թերևս խանգարում է Նազարի խելոքության փաստի ընդունմանը: Մանավանդ նրան թագավորի, երկրի տեր-տիրականի գահի վրա տեսնելուն: Բայց անառարկելի է, որ Նազարը թագավոր է դառնում ժողովրդի կանքով՝ խորհրդանշելով նրա երևակայած որակները: Նազարին վերաբերող այս խնդրի մեջ զգալի հստակություն կարող է մտնել, եթե հաշվի առնենք մարդկության պատմական փորձը: Իսկ այն ցույց է տալիս, որ բոլոր ժամանակներում էլ երկրների կառավարիչների համար առանձնացող խելոքությունը կամ, առավել ևս, գիտնականությունն ու փիլիսոփայական հանրագիտակությունը բոլորովին էլ առաջնահերթ անհրաժեշտության որակներից չեն եղել և չեն²¹:

Նազարը նույնիսկ...հանձարեղ է: Եթե նկատի ունենանք, որ այս բառի նախնական իմաստը ձևավորվել է իբրև անելանելի, անձար վիճակից ելքի գյուտ և բնութագրում է տվյալ ելքը գտնողին, ապա, նորից ասենք, որ Նազարը հանձարեղ է: Միթե հնարավոր է մոռանալ, որ թագավոր դարձավ տնից վտարված, որևէ հենարանից զուրկ, ծաղրված ու կարծես թե անխուսափելի կորստյան դատապարտված Վախկոտ Նազարը: Նրա անցած այդ ուղին, որը մենք մանրամասն դիտարկել ենք, ըստ էության, իր անելանելի վիճակի հաղթահարումն է, անձարակի իր վիճակից ելքի գյուտը: Միայն թե յուրովսանն՝ իր կարողություններին ու նկարագրին հատուկ ձևերով:

Ի մի բերելով՝ կարելի է ավարտել այսպես: Գիտակցում է նա, թե ոչ, Նազարն իր ապրած ժամանակների և համակեցական միջավայրի համար և՛ քաջ է, և՛ խելոք, և՛ հանձարեղ (հիարկե, որոշակի վերապահումով): Ամբողջ խնդիրն այն է, որ այդ միջավայրն ուն էլ բարձրացներ վեր, չէր լինելու ավելի խելոք, համարձակ ու հանձարեղ, քան Նազարն էր: Համենայնդեպս, ըստ հեքիաթի՝ դա այդպես է: Մյուս կողմից էլ՝ **Նազարը համարժեք է քաջության, խելոքության և հանձարեղության վերաբերյալ տվյալ հասարակության պատկերացումներին ու պահանջմունքի չափին:** Այնպես որ սխալ է բախտի մասին նրա դատողությունը իբրև պատահականությունների բարենպաստ շղթա դիտարկելը: Նազարի վերելքն օրինաչափության դրսևորում է, որը չիմացողը ներկայացնում է իբրև բախտի բերում: Մեզ համար անընդունելի է նրա կենսափորձային օրինակի այդպիսի ընկալումն ու մեկնաբանությունը մեր օրերում: Բայց դա Նազարն է...

21 Նույնքան անառարկելի է և այն, որ հնարավոր չէ չափման որևէ միավորով ապացուցել, որ աշխարհում երբևէ եղել է կամ այս պահին կա մի ժողովուրդ, որի կառավարիչը եղել է կամ այժմ էլ է այդ երկրի ամենախելոք մարդը: Ականջը կանչի բազմաչարչար Պլատոնի: Հակառակ իր բարի նպատակների, ամբցելի իմացականության, նույնիսկ մի քանի փորձերի՝ նա այդպես էլ չկարողացավ մարդկանց հասկացնել, որ շատ կշահեն, եթե կառավարիչներ լինեն խելոքները՝ իմաստունները (փիլիսոփաները):

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ԲՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ, 2013
Ե (ԺԵ) ԳԱՐԻ, ԹԻՎ 3 (43) ԽՈՒԽ-ՄԵՍԿՈՒՄԵՐ,

ՎԷՄ համահայկական հանդես

6. Եզրակացություններ և գնահատականներ

«Քաջ Նազարը» հեքիաթի վերլուծությունները (դասագրքայինից մինչ գիտական գրականություն) ակնհայտ ընդգծվածությամբ երեք առանցք ունեն. **Նազարը ծիծաղելիորեն վախկոտ է**, **Նազարը զարմանալի հաջողակ է** (բախտը բերում է), **հասարակությունը, որի անդամն է նաև Նազարը, անհույս հիմարների համախումբ է**:

Մինչդեռ՝ իր ողջ ստեղծագործությամբ մարդ անհատի, ազգի և մարդկության նկարագրի ու կեցության օրինաչափությունների հայտածման ու գեղարվեստական արտացոլման վրա տքնած գրողը (դրա լավագույն դրսևորումներից մեկն էլ խնդրո առարկա հեքիաթն է) ինչպես կարող էր երեք բացառիկ, ոչ օրինաչափ երևույթների նկարագրությամբ հեքիաթ շարադրել, որի վերաբերյալ կարելի է նաև այսպիսի ճշմարիտ կարծիքի հանդիպել. «Հեքիաթի փիլիսոփայական և սոցիալական նշանակության սահմաններն անչափ ընդլայնվում են, ներառում համամարդկային հարցեր: Թումանյանն «անմահ է պահում» Քաջ Նազարին, որպեսզի մարդկանց հիշեցնի, թե որքան անհեթեթ ու վնասակար են նրանց թողտվությամբ ստեղծվող կեղծ կուռքերը: Այդ իմաստով կարելի է ասել, որ, Թումանյանի մի շարք ուրիշ երկերի նման, «Քաջ Նազարը» ևս արծարծում է մարդու և մարդկության ներկայի ու ապագայի հարցերը»²²:

Հովհ. Թումանյանի հեքիաթի բովանդակությունը կարելի է մեկնաբանել նաև այսպես. «Թումանյանը ծաղրում է ամբոխային սնամեջ հոգեբանությունը, որը պատվանդան է դնում անբովանդակությանը, ստեղծում հերոսներ ու մեծություններ, հասնում խելագար պաշտամունքի... բոլոր ժամանակներում»²³: **Քայց ոչ իբրև անընդմեջ բախտի բերում, բարեհաջող պատահականությունների շղթա, հիմարության համաժողովրդական համաճարակ...**

Ավելին՝ Հովհ. Թումանյանի «Քաջ Նազարը» իրապատում հեքիաթ է: Դա նշանակում է, որ ժանրային որոշ պայմանականությամբ հանդերձ՝ նրա ներկայացրած իրականությունը պատմականորեն կոնկրետ է: Նրանում կարելի է կողմնորոշվել այդ կենսակերպի կոլորիտային-առտնին մանրամասնությունների կոնկրետությամբ: Նույնքան էլ պատմական պայմանավորվածություն ու կոնկրետություն ունեն նաև անհատի ու հասարակության կեցության այն օրինաչափությունները, արժեհամակարգային գերակայությունները, որոնք արտացոլված են հեքիաթում: Մյուս կողմից՝ հնարավոր չէ անտեսել նաև հեքիաթի փիլիսոփայական ներուժը, որքանով որ պատմական կոնկրետության մեջ հեղինակի հայտածած ու դիտարկած օրինաչափություններն ունեն մարդկային անհատական և համակեցական ընդհանրացող բովանդակություն:

Սա նշանակում է, որ հեքիաթի վերաբերյալ ցանկացած դիտարկում պետք է նախ և առաջ՝ մեթոդաբանական հստակ մոտեցում ունենա: Այսինքն՝ ակնհայտորեն որոշակի պետք է լինի, թե հեքիաթը ժամանակային ինչ կտրվածքով է վերլուծվում: Տարակերպ մոտեցում-

22 Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, Եր., 1979, էջ 334:

23 Թամրազյան Հր., Հովհաննես Թումանյան. բանաստեղծը և մտածողը, Եր., 1995, էջ 358:

ների հնարավորությունն ընձեռող ստեղծագործության վերլուծության հարցում (սա բնորոշ է անցյալի թեմատիկայով ցանկացած երկի, անգամ կենցաղային նշանակության արտեֆակտի) որոշակիությունը լավագույն և սխալականությունից ապահովագրող կողմնորոշիչն է:

Ցանկացած ստեղծագործության հարաբերվելը պահանջում է լրջորեն հաշվի նստել ժամանակային երեք շերտերի հետ՝ **արտացոլվող իրականության ժամանակը, գրողի ժամանակը, ընթերցողի ժամանակը**: Այս առումով միանգամից պետք է արձանագրենք, որ «Քաջ Նազարը» հեքիաթում ներկայացված հասարակության նկարագրի գնահատական-վերլուծությունների բովանդակությունը զգալիորեն պայմանավորված է արտացոլված իրականության ժամանակաշրջանի բովանդակության անտեսմամբ: Այլ կերպ ասած՝ մեր օրերի գրականագետները հաճախ հարյուրամյակներ առաջ եղած իրականության, մարդկային հարաբերությունների, համակեցական սկզբունքների դատավոր են դառնում՝ այդ ամենը կշռելով ու գնահատելով իրենց կեցության չափանիշներով: Դրա պատճառով էլ, գրեթե առանց բացառության, որպես «հիմարություն» է ներկայացվում մարդկային համակեցության այն տարբերակը²⁴, որն, ըստ հեղինակի աշխարհընկալման, հավերժական է («Եվ ասում են՝ մինչև էսօր էլ քեֆ է անում Քաջ Նազարը ու ծիծաղում է աշխարհքի վրա» (245):

Նազարի վերաբերյալ կայունացած ու շատ գործածված բնութագրերից մեկն էլ «ամենաանարժանը» լինելու մասին պնդումն է, որը գրականագիտության մեջ հաճախ է գործածվել²⁵: Բայց միթե Հովհ. Թումանյանի տեքստում ամեն ինչ այդքան պարզունակ է: **Հեքիաթի այդ ո՞ր դրվագից է երևում, որ Նազարից ավելի արժանավորները կային, կամ ինչից է իմացվում, որ մարդկանց վրա թանկ են նստում քահանայի գրած խոսքերը: Մինչդեռ հեքիաթում շատ որոշակի նկարագրված է ճիշտ հակառակը՝ բարիքը. Նազարի ականա կամ պայմանական առաջնորդությամբ երկու չարիքներից մարդկանց ազատվելը՝ վագրին սպանելը և թշնամուն հաղթելը:**

Եվ եթե անգամ մարդկային հիմարության կամ խելոքության չափանիշներով դիտարկելու լինենք հեքիաթը, ապա հանուն փաստական ճշմարտության պետք է որոշակի ճշգրտում իրականացնենք: Պատճառն ակնհայտ է. Հովհ. Թումանյանի ներկայացրածը համատարած հիմարության միջավայր չէ: Միթե կարելի է անտեսել, որ այդ համակեցության մեջ իրենց իրատես խելոքությամբ առանձնանում են Նազարին լավ ճանաչող կինը և համագյուղացիները: Նաև այն հարսանքավորները, որոնք նույնիսկ էյֆորիայի և փսիխոզի տարրեր ունեցող մթնոլորտում ամենքին լսելի հարցնում են Նազարի ծառաների ու ժանգոտ թրի մասին: Թեև վերջիններիս խելոքությունը շատ նման է նոր, անսովոր բան տեսած մանկան զարմանքին, որը բավարարվում է իր հարցին տրված ցանկացած, մանավանդ հանկարծակիի բերող, հասկանալի-անհասկանալի պատասխանով:

Կերպարների առաջին խմբի դերը հեքիաթում երկակի է. **Նախ**՝ նրանք

24 Գործածելով «տարբերակ» բառը՝ նկատի չունենք ժամանակաշրջանը՝ նահապետական-ավանդական կենսակերպը, այլ համակեցական այն սկզբունքները, օրինաչափությունները, որոնցով գործառույթում ու գոյատևում է այդ հասարակությունը:
25 Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, էջ 333:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Ե (ԺԵ) քարի, թիվ 3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

մերժում կամ կասկածում են Նազարին, նրա արժանավորությանը: **Իսկ երկրորդ** եզրակացությունն ուղղակի պարադոքսալ է. որքան էլ զարմանալի է, նաև վերջիններիս խելոքության արդյունքում է, որ Նազարը ... թագավոր է դառնում: Եթե կինն ու գյուղը նրան չվանեին, Նազարը չէր գնա ինքնահաստատվելու: Եթե հարսանքատանը կասկածողները հարցեր չտային, չէին լինի նրա վերաբերյալ առասպելն այդքան ուռձացրած պատասխանները ... և այլն: Ինչ է ստացվում. որ սրանք իրենց ազնիվ վարքագծով, անկեղծ կասկածով, ի վերջո՝ ազնիվ խելոքությամբ ակամա մասնակից են դառնում Նազարի թագավորական վերելքին: Կարծում ենք՝ այդ: **Որովհետև տվյալ հասարակության մեջ ակնհայտորեն գերակայող ու որոշող, կյանքի տերեր են այլ կարգի մարդիկ, որոնց խելոքությունը ծառայում է այլ նպատակի, արժեքների ու բարոյականության:**

Յուրովի խելոք են հեքիաթի նաև մյուս կերպարները: Միայն թե պետք է տարբերակել նրանց խելոքության դրսևորման նպատակը: Դա շատ ակնհայտ է՝ անձնական շահը, ակնկալվող օգուտը: Նազարի հասցեին նրանց գովեստները, նրան ծառայելու պատրաստականությունը և այլն, ընդամենն ավանսով տրվող և հատուցում ենթադրող ստորաքարշություններ են: Եվ իսկապես, թագավոր Նազարը չի անտեսում այս կարգի մարդկանց. «**Քաջ Նազարը դառնում է թագավոր, էն հսկաներից ամեն մեկին էլ մի պաշտոն է տալիս**» (245):

Սա ոչ թե հիմարների, այլ պնակալեզ ստորաքարշների հասարակություն է, ուր մարդկային այդ ցածր կատեգորիան այնքան հնարամիտ է, որ կարողանում է անգամ ազնիվ միտքն ու արարքը ծառայեցնել իր շահադիտական նպատակներին: **Սրանք հիմար չեն և ոչ էլ սրանց ստեղծած հասարակական մթնոլորտն է հիմարության համաճարակի մթնոլորտ: Սրանք խելոք են միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրենց շահը, դրա իրականացման համար իրենց ընտրած ձևը:**

«Քաջ Նազարը» հեքիաթում ներկայացված հասարակության վերաբերյալ տարածված կարծիքը (հիմարների ու հիմարության հասարակություն), իհարկե, բացատրելի է, եթե հաշվի առնենք, թե որ՞ն է դրա ձևավորման ու ամրակայման մեթոդաբանական ելակետը: **Իսկ դա, պարզ ասած՝ լիովին այլ ժամանակներում ապրող մարդու և ընթերցողի հայացքով անցյալի իրողությունների վերաբերյալ ձևավորված կարծիքն է: Կարծիք, որն ինչպես արդեն ասել ենք, անտեսում է ստեղծագործության մեջ ներկայացված իրականության կենսակերպի ժամանակաշրջանը, բնորոշ իրողությունները, համակեցության կայուն, անշրջանցելի անհրաժեշտությունները:**

Հովհ. Թումանյանի երգիծանքը գաղափարական հիմնախնդիր է լուծում: Նա ցանկացել է երգիծանքի թույլատրած չափազանցությունների ու խտացումների միջոցով ընդգծել հասարակական կեցությանը և մարդկանց նկարագրին բնորոշ արատավոր իրողությունները: Իսկ դրանցից երբևէ պաշտպանված չի եղել մարդկային համակեցության որևէ տարբերակ՝ ինչպես անցյալում, այնպես էլ ժամանակակից աշխարհում, ու նայելով մարդկության փորձին՝ ապահովագրված չեն լինելու նաև ապագայում:

Մեփական փորձը հաշվի չառնելու մարդկությանը բնորոշ այս զար-

մանալի, բայց օրինաչափ իրողությունն է Գ. Հեգելն անվանել **պատմության պարադոքս**:

Մեր օրերի համակեցությանն ու մարդուն ևս բնորոշ են բազմաթիվ արատներ, որոնց տեսանկյունով ժամանակաշրջանի դիտարկումը հաջորդ սերնդին կարող է հանգեցնել... ողջ եղած-անցածը նույն «հիմարություն» բառով բնութագրելու գայթակղությանը: Այսինքն՝ «Քաջ Նազարը» հեքիաթի իրականությանը բնորոշ «հիմարությունը» նկատած մարդկանց ու նաև մեր կենսակերպը նույնպես լի է ոչ պակաս ինքնատիպ ու զարմանալի «հիմարներով ու հիմարություններով»: Չէ՞ որ և՛ խորհրդային, և՛ մեր ժամանակներին բնորոշ են շահադիտաբար միֆաստեղծման ու մարդկային վարքագծի նույն արատները, ինչ Հովհ. Թումանյանի հեքիաթի ժամանակներին ու հերոսներին: Բայց դա դեռևս չի կարող նշանակել, թե մեր անցյալն ու ներկան «հիմարների ու հիմարության» հասարակություն է: Այդ ամենը «հիմարություն» որակելը անհամարժեք է գրողի մատնանշած համակեցական օրինաչափությանը: Այն շատ ավելի ծանրակշիռ, լուրջ ու մարդուց հավերժաբար անբաժան հիմնախնդիր է:

Հեքիաթի նուրբ ու դիպուկ երգիծանքն ընթերցողի համար կարող է անհազ ծիծաղի առիթ լինել այնքան ժամանակ, քանի դեռ չի նկատվել, որ դա հավասարապես վերաբերում է բոլորին և բոլոր ժամանակներին ու նաև՝ իրեն: Մեկական կենսակերպի վերաբերյալ միամիտ լավատեսությունը միշտ էլ խաբուսիկ կողմնորոշում է. մարդկային ոչ մի սերունդ, համակեցական ոչ մի դրվածք երբեք չի եղել ավելի խելոք, քան կարող էր:

Հովհ. Թումանյանի հեքիաթի մարդիկ խելոք են միայն այնքան, որքան որ կարող էին լինել իրենց կենսական հանգամանքներում: Իսկ դա չի նշանակում, որ նրանք հիմար են: Նրանց վարքագիծն ու նկարագիրը միանգամայն համարժեք է իրենց ժամանակաշրջանին, համակեցության ոգուն, գործառնության սկզբունքներին ու պահանջմունքներին: Հեքիաթում ներկայացված կենսակերպի տարբերակը ոչ թե շեղում է մարդկային գոյին բնորոշից, այլ դրա օրինաչափ ձևերից մեկն է:

Եվ մինչև օրս էլ Նազարի թագավորելու վերաբերյալ Հովհ. Թումանյանի եզրափակիչ մատնանշման խորհուրդը հավասարապես վերաբերում է տվյալ համակեցական տարբերակի ոգուն, ուստի հանձարեղորեն ճիշտ էր Մեծ Լոռեցիի իր վերջնական եզրակացության մեջ. «Եվ ասում են մինչև էսօր էլ քեֆ է անում Քաջ Նազարը ու ծիծաղում է աշխարհքի վրա»...

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Ե (ԺԵ) քառի, թիվ 3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

Summary

THE UNKNOWN NAZAR THE BRAVE Based on H. Tumanyan's tale of the same name

Sergey A. Aghajanyan

The article is an attempt to interpret newly the famous tale of H. Tumanyan «Nazar the Brave». To make the differences between the new interpretation and the one formed during the past decades as clear as possible, the author referred in details to the all fragments of the tale. The new analysis of the work has been done with the combination of methodological, as well as literary and culturological approaches. The research has several axes: the protagonist – Nazar, his co-existential environment and the nature of interrelations of these two. In the end of the article you will find the clarifications concerning the nature and reasons of unacceptable approaches in the analyses of the tale “Nazar the Brave”.